26 սեպտեմբերի 2019 թվականի N 1325 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1457-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերի զինծառայողների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի փրկարարական ծառայողների իրային ապահովության կարգը (չափաքանակները) սահմանելու մասին» N 1457-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում, ամբողջ տեքստում և N 2 հավելվածում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության» բառերը փոխարինել «ազգային անվտանգության ծառայության» բառերով.

2) որոշման վերնագրից և ամբողջ տեքստից հանել «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի» բառերը.

3) N 1 հավելվածի N 1 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-ին կետով՝

«13.1.	Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	2 տարի	».

4) N 1 հավելվածի N 2 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին կետով՝

«16.1.	Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	2 տարի	».

5) N 1 հավելվածի N 3 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին կետով՝

«16.1.	Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	2 տարի	».

6) N 1 հավելվածի N 4 չափաքանակի աղյուսակում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետով՝

«12.1.	Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	3 տարի	»,

բ. «ԿՈՇԿԵՂԵՆ» բաժնի առաջին սյունակի «12» թիվը փոխարինել «12.2.» թվով.

7) N 1 հավելվածի N 5 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետով՝

«7.1.	Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	3 տարի	».

8) N 1 հավելվածի N 6 չափաքանակի աղյուսակում՝

ա. 12-րդ և 14-րդ կետերում «Քանակը» սյունակում «3 հատ» բառերը փոխարինել «6 հատ» բառերով,

բ. առաջին սյունակի 14-րդ կետից հետո կրկնվող «14» թիվը փոխարինել «14.1» թվով.

9) N 1 հավելվածի N 7 չափաքանակի աղյուսակում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին կետով՝

«9.1.	Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	2 տարի	»,

բ. 14-րդ կետում «Քանակը» սյունակում «52 հատ» բառերը փոխարինել «6 հատ» բառերով.

10) N 1 հավելվածի N 15 չափաքանակի աղյուսակի 39-րդ կետում «Շահագործման ժամկետը» սյունակում «3 տարի» բառերը փոխարինել «1 տարի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 4
Երևան